ՆԱԽԱԳԻԾ

# ՔԱՂԱՔԱՑԻ ՆՈՐԱՅՐ ՀԱՅԿԱԶԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Նորայր Հայկազի Շաբոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցի 2011-2013 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով, քանի որ վերոնշյալ տրանսպորտային միջոցը 2011 թվականից չի շահագործվել անսարքության պատճառով, որի համար առաջացել է գույքահարկի պարտավորություն, որը 2016 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ կազմել է ընդամենը 283997 (երկու հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 188700 (մեկ հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 95297 (իննսունհինգ հազար երկու հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ: 2016թվականի սեպտեմբերի 29-ին և նոյեմբերի 29-ին վճարել է գույքահարկի մայր գումարը՝ 188700 (մեկ հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով Նորայր Հայկազի Շաբոյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Կամոյի փողոց տուն 26 հասցեում, անձնագիր N AK 0325859 տրված՝ 2009 թվականի հունիսի 26-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 1108600514) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2016 թվականի սեպտեմբերի 05-ին N10196 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Նորայր Հայկազի Շաբոյանին սեփականության իրավունքով պատկանող JEEP GRAND CHEROKEE 3.1 TD LIMITED մակնիշի, 15 SO 150 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2011-2013 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ՝ ազատելով գույքահարկի տույժի 95297 (իննսունհինգ հազար երկու հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Ռ.ՍԱՆՈՅԱՆ**

**Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ**

**Լ.ԶԻԼԱՎՅԱՆ**

**Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

Կատ. Ս. Մինասյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## << ՔԱՂԱՔԱՑԻ ՆՈՐԱՅՐ ՀԱՅԿԱԶԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Քաղաքացի Նորայր Հայկազի Շաբոյանին սեփականության իրավունքով պատկանող JEEP GRAND CHEROKEE 3.1 TD LIMITED մակնիշի, 15 SO 150 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2011-2013 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելը պայմանավորված է նրանով, որ վերոնշյալ տրանսպորտային միջոցը 2011 թվականից չի շահագործվել անսարքության պատճառով, որի համար առաջացել է գույքահարկի պարտավորություն, որը 2016 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ կազմել է ընդամենը 283997 (երկու հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 188700 (մեկ հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 95297 (իննսունհինգ հազար երկու հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ: 2016թվականի սեպտեմբերի 29-ին և նոյեմբերի 29-ին վճարել է գույքահարկի մայր գումարը 188700 (մեկ հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ տույժը հնարավորություն չունի վճարելու ֆինանսական դժվարին պայմաններում բնակվելու պատճառով:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## << ՔԱՂԱՔԱՑԻ ՆՈՐԱՅՐ ՀԱՅԿԱԶԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Քաղաքացի Նորայր Հայկազի Շաբոյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2011-2013 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու մասին>> որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: